

Գիտություն

ՀՈՒԼԻՍ-
ՕԳՈՍՏՈՍ

№ 7-8

(344)

2020 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Եղիշե ԶԱՐԵՆՑ

Ես իմ անուշ Հայաստանի



Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաձկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև,
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Բուշակի պես լուսապսակ ձակատ չկա.
Աշխարհի անցիր, Արարատի նման ձերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ծամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Ի ԴԵՄ

Ինչո՞ւ ենք նոր սերնդին պրկում հոգևոր ժառանգությունից

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սփյուռքի նախարարությունը համարյա քննարկման է մերկայացրել կրթության բարեփոխումների մեր նախագիծ, որում առաջարկվում է մաս հայերենի ժամերի կրճատումը և ամենաուշագրավը՝ դպրոցական ծրագրերից օտարել «Հայ եկեղեցու պատմություն» առարկան:

Նախարարության պատճառաբանումներն անհասկանալի են և անբովանդակ: Պատճառը, որը իշխանությունները կարողացան իրագործել, այն է, որ մրանք Հայ առաքելական եկեղեցին իրավական առումով դարձրին որպես շարքային կրոնական կազմակերպություն, ինչպիսին, ասենք, Հայ ավետարանական եկեղեցին է: Սա օրերս Հայաստանի անվտանգության խորհրդի նիստում փաստեց հանրապետության վարչապետը:

Դե, եթե Հայ առաքելական եկեղեցին շարքային կրո-

նական կազմակերպություն է, ինչու պիտի նրա պատմությունը ուսուցանվի հայ դպրոցում: Իսկ փոքրիկների սեռական դաստիարակությունը պետք է դառնա պարտադիր:

Նախագծի հեղինակները չգիտեն, ամտեղյակ են կամ չինձնալ են ձևացնում, որ Հայ առաքելական եկեղեցին սովորական եկեղեցական կազմակերպություն չէ, այլ ինքնատիպ, ազգային, զորեղ կառույց, որն ապացուցվել է հազարավոր տարիներ՝ սկսած 301 թվականից, երբ Հայաստանը պետականորեն ընդունեց քրիստոնեական հավատը: Այն հայ ժողովրդի համար եղավ ազգային բացառիկ արժեք և դարձրեց շարունակ, երբ մենք չունենք պետականություն, մույնիսկ կատարեց պետության գործառնությունները: Եվ մեզ տիրող բարբարոսները, կամա թե ակամա հաշվի էին նստում մեր եկեղեցու հետ:

Հայ առաքելական եկեղեցին այնքան հզոր էր, որ կա-

րողացավ այնպես անել, որ մեր փոքրաթիվ ժողովուրդը չկրոնափոխվի, չդառնա թուրք կամ պարսիկ և ծուլվի, անհետանա մուսուլմանական ցեղերի մեջ:

Մեր կաթողիկոսներից Սուրբ Սահակ Պարթևը, քրիստոնեության ընդունման արշալույսին խրախուսեց, հորդորեց համձարեղ Մաշտոցին ստեղծելու մեր բացառիկ, համձարեղ գրերը՝ հայերենի այբուբենը, որը դարձրեց շարունակ ծառայում է հայ ժողովրդին և դարձել է նրա ինքնության, ինչու չէ՞, մաս գոյության երաշխավորը:

Համձարեղ Չարենցը, որը 18 տարեկան հասակում գրեց Հային ու Հայաստանին նվիրված «Ես իմ անուշ Հայաստանի» համձարեղ բանաստեղծությունը, այնտեղ ունի այսպիսի տողեր.

Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր:

>2

ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Վահան Ավետիսյանը



Սույն թվականի հունիսի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշ-

տոնում ընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Ավետիսյանը:

Վահան Ավետիսյանը ծնվել է 1959 թ. Երևանում: 1981 թ. ավարտել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1981 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ սկզբում որպես ինժեներ, այնուհետև՝ կրտսերից մինչև առաջատար գիտաշխատող:

Վահան Ավետիսյանը 1989 թ. Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի «Տեսական մեխանիկայի» մասնագիտացված խորհրդում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Մանիպուլյացիոն ռոբոտների տրանսպորտային շարժումների օպտիմալ ղեկավարումը» թեմայով: 2003 թ. նույն մասնագիտացված խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Մեխանիկական համակարգերի դիրքավորման օպտիմալ և սուբօպ-

տիմալ ղեկավարումը» թեմայով: 2009 թ. Վահան Ավետիսյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

2004-2009 թթ. դասախոսել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի օպտիմալ կառավարման և մոտավոր մեթոդների ամբիոնում որպես դոցենտ: 2014 թ.-ից ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր է:

1992-2008 թթ. Վահան Ավետիսյանը եղել է ՀՀ պետությունից ֆինանսավորվող գիտական թեմաների ղեկավար, 2008-2009 թթ.՝ Ֆրանսիայի (թ. Նիս) ինֆորմատիկայի և ավտոմատացման ազգային հետազոտությունների ինստիտուտում և ԱՄՆ-ի Իլինոյսի համալսարանում՝ հրավիրված հետազոտող:

Վահան Ավետիսյանի գիտական հետազոտությունները վերաբերում են դինամիկական համակարգերի, այդ թվում՝ մանիպուլյացիոն ռոբոտների, օպտիմալ

և սուբօպտիմալ ղեկավարմանը, օպտիմալ փնտրման խնդիրներին և բախումից խուսափող դինամիկական օբյեկտների օպտիմալ ղեկավարումների կառուցմանը: Նա ավելի քան 80 գիտական հրապարակումների հեղինակ է: «Оптимальное управление электроприводами промышленных роботов» մենագրության և «Վարիացիոն հաշիվ և օպտիմալ կառավարում» դասագրքի համահեղինակն է: Վահան Ավետիսյանի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում «Տեսական մեխանիկա» մասնագիտությամբ պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Վահան Ավետիսյանը տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ է, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի 047 մասնագիտական խորհրդի անդամ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության պատմության հետազոտման նվիրյալ տարեգիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը 80 տարեկան է:

Ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Կապան քաղաքում, 1947-1957 թթ. սովորել և ավարտել է թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1961-1966 թթ. սովորել ու գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի պատմության բաժինը: 1966-1968 թթ. Կ. Հարությունյանը աշխատել է Հա-

զան բազմակողմանի լուսաբանվել է Մեծ հայրենականին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Այս մեծագործության համար Կ. Հարությունյանն արժանացել է ՌԴ ԳԱ նախագահության և Ռուսաստանի պատմության ինստիտուտի տնօրինության «Պատվավոր դիպլոմի» ու դրամական պարգևի:

Պատմագիտության դոկտորի գրչին են պատկանում նաև մարշալներ Ի. Ք. Բաղդամյանի, Հ. Խ. Բաբաջանյանի, Ս. Ա. Խուդյակովի (Ա. Ա. Խանփեյանց) և Ս. Ք. Ազանովի մասին ռուսերենով գրված մենագրությունները: Առաջին անգամ Կ. Հարությունյանն է ռուսումնասիրել ՌԴ անվտանգության ծառայության արխիվի ու Ռուսաստանի ռազմական կոլեկցիայի գերագույն դատարանի



խարարության կենտրոնական արխիվից նրա հայտնաբերած փաստաթղթերը:

Անվանի պատմաբանն ակտիվորեն մասնակցել է նաև Խորհրդային Հայաստանից Հայրենական մեծ պատերազմում զոհված հայերի անուններն ամփոփող «Հուշամատյան» քառահատորյակի պատրաստման աշխատանքներին, հեղինակ է «Հայկական ազգային ատլաս»-ում և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս»-ում երկու քարտեզների, որոնք վերաբերում են Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցությանը:

Կ. Հարությունյանը Մ. Սահակյանի հետ 1988 թ. հրատարակել է «Նրանք մարտնչել են համուհի հայրենիքի» գիրքը, որտեղ առաջին անգամ լուսաբանվել են ՀԽՍՀ ԳԱ համակարգում աշխատող Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մարտական սխրանքներն ու աշխատանքային գործունեությունը: Այդ գիրքը (որոշ լրացումներով) ռուսերենով հրատարակվել է 2001-ին՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)» վերնագրով:

Ամբողջական չէր լինի Կ. Հարությունյանի գիտական կենսագրությունը, եթե չնշվեր, որ նա, ընդհանուր առմամբ, հրատարակել է 35 մենագրություն, համահեղինակ է 12 գրքի ու ժողովածուի, շուրջ 200 գիտական և հրապարակախոսական հոդվածների, Խորհրդային Միության հայ հերոսների ու Փառքի շքանշանի լրիվ ասպետների պլակատների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 4 թեկնածուական, ընդդիմախոսությունը՝ 5 ատենախոսություն: Պատմաբանը մասնակցել, զեկուցումներով հանդես է եկել մի շարք միջազգային ու հանրապետական գիտագործական գիտաժողովներում: Ավելի քան 30 տարի ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվի նախագահն է:

Գիտական հայրենանվեր աշխատանքի համար Կ. Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղդամյան» և այլ մեդալներով, ՀՀ ԳԱԱ «Գովեստագրով» ու «Վաստակագրով»:

Շնորհավորելով մեր ավագ գործընկերոջը հորեկյանի կապակցությամբ՝ մաղթում ենք առողջություն ու գիտական մոր ձեռքերումներ:

Անուշավան ԶԱՔՐԻԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԱՄՏԱՎՈՐԸ

(Կլիմենտ Հարությունյանի 80-ամյակի առթիվ)

յաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1968 թ. ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 1971 թ. մինչ օրս աշխատում է նույն ինստիտուտում՝ սկզբում որպես կրտսեր, ապա՝ ավագ, առաջատար գիտաշխատող, 1994 թ. հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, այնուհետև՝ «Հայ զինվորական պատմությունը» թեմատիկ խմբի ղեկավար, 2015 թ.՝ գլխավոր գիտական աշխատող: 1979 թ. պաշտպանել է թեկնածուական, 1994-ին՝ դոկտորական ատենախոսություններ:

Կ. Հարությունյանի դոկտորական ատենախոսությունը՝ «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.», ըստ էության, հայկական զինուժի շինարարության ընդհանրացման պատմությունն է վերոհիշյալ ժամանակաշրջանում: Ատենախոսությունը 2002 թ. հրատարակվել է որպես մենագրություն:

Վաստակաշատ պատմաբանի հիմնական աշխատություններից է նաև 2004 թ. ռուսերենով լույս տեսած «Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» սովորածավալ մենագրությունը (866 էջ), որտեղ հայ պատմագրության մեջ առաջին ան-

գաղտնի նյութերը և ուշագրավ աշխատությունն ստեղծել ավիացիայի հայ մարշալ Ս. Ա. Խուդյակով-Ա. Ա. Խանփեյանցի մասին, որը լույս է տեսել երկու անգամ՝ 2006-ին և 2008-ին:

Կ. Հարությունյանը 2001 թ. հրատարակել է «Գրիգոր Արտեմի Հարությունյանի կյանքն ու գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» մենագրությունը, որտեղ հայ պատմագրության մեջ դարձյալ առաջին անգամ նորահայտ արխիվային փաստերի, մամուլի նյութերի ու ժամանակակիցների հուշերի հիման վրա լուսաբանել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Անվանի պատմաբանի ուսումնասիրության ոլորտում հատուկ տեղ են գրավում Ստալինգրադի, Լենինգրադի, Կուրսկի և Մոսկվայի ճակատամարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցերը, որոնք առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն:

Կ. Հարությունյանի տեսադաշտից չեն վրիպել նաև Հայրենական մեծ պատերազմին Արցախի և Ջավախքի հայության մասնակցության հարցերը: 2009 թ. արխիվային նորահայտ փաստերի հիման վրա ռուսերեն հրատարակել է «Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության

Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)» մենագրությունը: 2014 թ. Կ. Հարությունյանը հրատարակել է «Ջավախքահայերի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» մենագրությունը:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Կ. Հարությունյանը սերտ համագործակցում է նաև Ռուսաստանի ու Բելառուսի իր գործընկերների հետ: Արդյունքում, 2010 թ. Մինսկում լույս է տեսել «Խորհրդային Միության հայ հերոսները Բելառուսի համար մղված մարտերում (1941-1944)» աշխատությունը՝ Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի ռազմական պատմության բաժնի վարիչ Ա. Մ. Լիտվինի համահեղինակությամբ: 2010 թ. Երևանում ռուսերենով հրատարակված «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945)» աշխատության (համահեղինակ՝ Հ. Ռ. Ռոդոսյան, 875 էջ) առաջաբանը գրել է ՌԴ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Կուլմանյովը: Մինչ այդ՝ 2009 թ., Սանկտ Պետերբուրգում ռուսերենով լույս էր տեսել «Հայերը Լենինգրադի համար մղված մարտերում» գրքույկը:

Մոտ կես դար աշխատելով Ռուսաստանի ռազմապատմական արխիվներում՝ Կ. Հարությունյանն զգալի ավանդ ունի արխիվային մի շարք փաստաթղթերի և նյութերի ժողովածուների կազմման գործում, որոնցում հիմնականում տեղ են գտել ՌԴ պաշտպանության նա-

Ինչո՞ւ ենք մեր սերնդին պրկում

➤1 Այո, մեր գրքերը դարձրել շարունակ գրվել են մեծապայան երկաթագիր տառերով, և այդ գրքերը գրվել են մեր եկեղեցիների, մեր վանքերի կիսամութ խցերում, գրվել են նվիրյալ հոգևորականների ձեռքերով: Դա կլինի Պատմահայր Խորենացին, Ագաթանգեղոսը, Պավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, թե համեմարել, Տիեզերական Սուրբ հռչակված Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, թե Ամանիա Շիրակացին: Մեր եկեղեցին վանքեր, եկեղեցիներ, մատուռներ է կառուցել ողջ Հայաստանով մեկ՝ անդնդախոր ձորերի եզրին, լեռների ծերպերին և բոլոր-բոլոր բնակավայրերում: Եվ այդ կառույցները եղել են նաև դպրոցներ, համալսարաններ, որտեղ ուսուցիչները եղել են հայ քրիստոնյա վանականները: Հայ եկեղեցու հովանու ներքո են ծաղկել գրականությունը, միջնադարյան հայ փառահեղ բնարեգությունը, մեր հոգևոր երաժշտությունը, հայ գիտությունը, արվեստը, պատմությունը, ճարտարապետությունը: Հայ եկեղեցուն են ստեղծվել ու ծաղկել հայ զարմանալի և շքեղ, մինչ օրս հիացմող հայ միջնադարյան մանրանկարչությունը, հայ ճարտարապետությունը (Զվարթնոց, Գանձասար, Տաթև, Աղթամարի Սուրբ Խաչ, Գեղարդ, Նորավանք և բազում այլ գլուխգործոցներ): Եվ այս բոլորը շնորհիվ Հայ առաքելական եկեղեցու գերագույն ջանքերի:

Մենք շատ ենք հպարտանում մեր Մատենադարանով

և իրավունք ունենք: Այնտեղ պահվող հազարավոր ձեռագրերը գրվել են եկեղեցիների և վանքերի կիսամութ խցերում, որտեղ գիշեր ու ցերեկ տքնել են հայ հոգևորական գրիչները: Եվ նրանց տառապալից, տքնաջան արարումները մեզ թույլ են տալիս այդ եզակի, անկրկնելի, զարմանալի զանգվածը հպարտությամբ ներկայացնել աշխարհին և փաստել, որ մենք՝ հայերս, հին, քաղաքակիրթ, առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած ժողովուրդն ենք:

Այո, Հայ առաքելական եկեղեցին սրբորեն կատարել է Արարիչ Աստծուն տված իր երդումը և պատվով է կատարել հայապահպանությունը, մեր քաղաքակրթությանը, ինքնությունը, լուսավորությանը և մշակույթին անմնացորդ ծառայելու, հայ պետականությանը նվիրվելու իր սուրբ և բարձր պարտավորությունը:

Նախագծի հեղինակները խոստանում են, որ այս առարկան ներմուծվելու է հայ ժողովրդի պատմության ծրագրում: Մենք չենք հավատում, իսկապես չենք հավատում, ինչպես չենք հավատում, որ բուհական ծրագրերում հայագիտական առարկաները ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայեցողական են լինելու: Չենք հավատում, որովհետև այս կառավարությունը և խորհրդարանական մեծամասնությունը ազգային ինքնության հարցերում վստահություն են ցուցնում դեռ որևէ հայտ չեն արել, այլ

ծրագրված քանդում են:

Հայ եկեղեցու պատմությունը, ո՛չ այն իմաստով, որով տարագրվել է վերոհիշյալ դասագրքերում, նաև պետականության մեր պատմությունն է, և բնավ պատահական չէ, որ Մայր աթոռը դարձրել ընթացքում անընդհատ տեղաշարժվել է այն բոլոր մայրաքաղաքներով մեկ, որտեղ պատմական պայմանների բերումով հաստատվել է Հայոց պետական գահը, իսկ վերջինիս բացակայություն՝ իր վրա է վերցրել նրա շատ գործառնություններ, ընդհուպ բանակաշինությունը:

Բացի այդ, Հայ եկեղեցու պատմությունը պատմությունն է հայկական ճարտարապետության, նրա ուրույն ոճի դրսևորման, պատմությունը հայկական երաժշտության, գրականության, կերպարվեստի, փիլիսոփայական մտքի, իրավագիտության, պատմագիտության, մաթեմատիկայի, բժշկագիտության, աշխարհագիտության, գրչության, տպագրության, մույնիսկ մամուլի, գեթ մինչև 19-րդ դարի կեսեր: Ավելին՝ Հայ եկեղեցու պատմությունը պատմությունն է հայ դպրոցի, հայ դպրության, համալսարանների, որոնք առնվազն երկու դարով կանխել են եվրոպական նշանավոր համալսարանները:

Ոչ ոք իրավունք չունի մեր դպրոցականներին և ուսանողներին զրկելու այդքան խոշոր ժառանգությունից: Առանց այդ ժառանգության մենք երբեք չենք ունենա հայ արժանապատիվ սերունդ:

Ուրեմն, պարոնայք, պետք է Հայ եկեղեցու արժանի և արժանապատիվ դասագիրք պատվիրել և դրանով ուսուցանել մատաղ սերնդին՝ պարտադիր:

2010-2015 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Հալեի համալսարանի (Գերմանիա) հետ համատեղ, հնագիտական աշխատանքներ է իրականացրել Սոթքի տարածաշրջանում. Գեղարքունիքի մարզ: Արշավախմբի նպատակն էր մի կողմից հետազոտել արդեն հայտնի հնագիտական հուշարձանները՝ համապատասխան ճշտումներ մտցնելու նպատակով, մյուս կողմից էլ փնտրել նորերը և այդպիսով

Լալայանն է (1906 թ.), ապա Ս. Բարխուդարյանը, Հ. Մնացականյանը, Գ. Միքայելյանը, Ժ. Խաչատրյանը, Ա. Քալանթարյանը, Ի. Կարապետյանը և վերջերս հատկապես հայ-իտալական արշավախումբը՝ Ս. Հմայակյանի ու Ռ. Բիշինյանի ղեկավարությամբ:

Մեր արշավախումբը հետախուզական աշխատանքներ է իրականացրել տարածքում՝ սկսած 2010 թ., մասնավորապես 43 հուշարձաններում, որոնցից 23-ը նորա-

կավայր է և գտնվում է Սոթք գյուղի արևելյան հատվածում: Այն ունի յուրահատուկ ռազմավարական դիրք՝ գտնվելով դեպի համանուն ոսկու հանքերը և Հարավային ու Արևելյան Կովկասը միացնող Սոթքի անցումը տանող ճանապարհի վրա: Այս դիրքը հնարավորություն է տալիս վերահսկելու ողջ տարածաշրջանը: Այն բլուրը, որտեղ գտնվում է Սոթք 2 բնակավայրը, մինչև XX դ. վերջերը հնագետներին անհայտ էր: Միայն 1990-ական թթ. վերջին

բերվել է 2011 թ.: Այն գտնվում է համանուն գյուղից դեպի ոսկու հանք տանող ճանապարհին և բաղկացած է մոտ 15՝ միմյանցից հեռու գտնվող դամբարաններից, որոնցից երկուսը պեղվել են մեր արշավախմբի կողմից (2013 և 2015 թթ.): N 1 դամբարանը դեռ հայտնաբերման պահին կիսով չափ ոչնչացված էր հավանաբար ոսկու որոնումների կամ հարակից երկաթուղու կառուցման ժամանակ կատարված աշխատանքների արդյունքում: Դամբարանաբլրի հյուսիսային կեսը լիովին բացակայում էր, և կտրվածքում տեսանելի էին խեցեղեն բեկորներ ու մարդու կմախքի մի հատվածը: Պեղումներն այստեղ առավելապես հետապնդում էին փրկարարական նպատակներ: Դամբարանաբլուրը շրջանաձև կրոնիկա էր՝ զուրկ արտաքին զրահից: Դամբարանը հիմնահողային էր: Խուցը չուներ ծածկասալեր: Խցի արևելյան հատվածում առկա էր հարթակ, որի վրա գտնվում էր մեկ հանգուցյալ՝ ոչ ամատոմիական դիրքում (30-35 տարեկան տղամարդ): Հիմնական թաղումը (12-15 տարեկան աղջիկ) տեղակայված էր խցի հյուսիսարևելյան հատվածում: Ուղեկցող գույքը ներառում է թվով 9 խեցանոթներ (մի քանիսը լի կենդանական ոսկորներով) և բրոնզե դաշույն:

N 2 դամբարանը կանոնավոր շրջան էր, իսկ դամբարանախուցը հիմնահողային էր: Կմախք որպես այդպիսին չի հայտնաբերվել: Առկա էին, խիստ քայքայված մարդկային (երեխա և մեծահասակ) և կենդանական ոսկորներ: Ուղեկցող գույքը ներառում էր թվով 5 խեցանոթներ, բրոնզե մատանիներ, հիմնականում մածուկից, սարդիոնից, բրոնզից տարատեսակ ուլունքներ:

Երկու դամբարաններն էլ թվագրվում են Ք.ա. III-II հազ. սահմանով և տեսանելի են թռեղք-վանածորյան մշակույթի համատեքստում:

Նորաբակ 1 բնակատեղին գտնվում է համանուն գյուղի հարավարևելյան հատվածում՝ Քարվաճառ տանող ռազմավարական կարևոր ճանապարհի վրա: Այն բաղկացած է ամրացված բնակավայրից ու վերջինիցս հարավ-արևելք տարածվող դամբարանադաշտից: 2011-2013 թթ. կատարված հնագիտական աշխատանքների նպատակը չուսումնասիրված հուշարձանի ժամանակագրությունը ճշգրտելն էր: Ըստ այդմ պարզ է դարձել, որ բնակատեղին գործել է դեռևս վաղ բրոնզի դարից: Այն արտահայտված է կավե ճարտարապետությամբ, տիպիկ սև փայլեցրած անգարդ խեցեղենով ևն: Բնակավայրն իր ակտիվության զագաթնակետին է եղել վաղ և միջին երկաթի դարերում (Ք.ա. XII-VII դդ.), երբ այն ամրացվել է Նորաբակ 1-ը վերստին բնակեցվել է միջնադարում (XIII-XIV դդ.): Պահպանվել են քարե հիմքով շինությունների հետքեր, գտնվել են բազմաթիվ խեցեղեն բեկորներ, երկաթե, բրոնզե, ապակե առարկաներ, աշխատանքային գործիքներ ևն:

Բնակավայրին կից կա դամբարանադաշտ, որը բաղկացած է 21 կրոնիկաներով դամբարաններից: N 1 դամբարանաբլուրը շրջանաձև կրոնիկա էր, որտեղ փաստագրվել են 4 դամբարանից: Դամբարանաբլրի զրահի մեջ հայտնաբերվել են ուլունքներ, տարածամանակյա (միջին բրոնզից միջնադար) խեցեղեն բեկորներ, ոչ մեծ քանակությամբ վանակատե ցեպներ, բրոնզե գոտու կամ զրահի բաժանարար և բրոնզե մանյակ:

N 1 դամբարանախուցը քառակուսի հատակագծով ոչ կանոնավոր քարարկղ էր, որտեղ կատարվել էր խմբային թաղում (7 անհատ): Դամբարանն ակնհայտորեն թալանված էր: Թաղմանն ուղեկցող գույքը ներառում էր թվով 2 ամբողջական խեցանոթ, բրոնզե մատանիներ, ապարանջաններ, գավազանի զուլիս, «սևանյան» տիպի դաշույնի բռնակ և տարատեսակ ուլունքներ:

N 2 դամբարանախուցը հատակագծում ձվաձև ոչ կանոնավոր քարարկղ էր: Դամբարանում կատարված էր անհատական թաղում: Ննջեցյալ պառկած էր աջ կողքի վրա՝ W-աձև, կծկված վիճակում: Այստեղ իսպառ բացակայում էր ուղեկցող գույքը: N 2 դամբարանից կմախքի հնապիսության համար բավական հետաքրքիր էր. թաղված մարդու ողնաշարի վրա

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ



սով ընդլայնել ուսումնասիրվող տարածաշրջանի բնակավայրային համակարգի մասին առկա տվյալները: Բացի այդ, արշավախմբի խնդիրներից էր պեղումներ իրականացնել կարևոր հուշարձաններում՝ տարածքի հնագիտական պարբերացման և ժամանակագրության վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու համար:

Ծրագրի միջմասնագիտական թիմը բաղկացած էր հայկական (Ա. Բորոխյան) և գերմանական (Ռ. Կունցե) կողմերի ղեկավարներից և միջմասնագիտական խմբից, որի մեջ մտնում են հնաբուսաբանության (Ռ. Հովսեփյան), մարդաբանության (Ռ. Մկրտչյան և Լ Սիմոնյան), գեոֆիզիկայի (Ռ. Դուրգարյան) և այլ մասնագետներ: Հնագիտական աշխատանքներն ուղեկցվում էին երկրաբանական-հնամենադագործական հետազոտություններով Սոթքի ոսկու հանքի շրջակայքում, որոնք ղեկավարում էր Խ. Մելիքսեթյանը, ներկայումս ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենը: Արշավախմբի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին ԵՊՀ ուսանողները և ՀԱԻ աշխատակիցները (Մ. Ամիրյան, Ա. Ազիզյան, Հ. Դանիելյան, Հ. Սիմոնյան, Ա. Գրիգորյան, Ռ. Դավթյան, Լ. Մկրտչյան, Հ. Վանյան, Հ. Սիմոնյան), ինչպես նաև Մյունխենի և Հալեի համալսարանների ուսանողները:

Սոթք (Սոդք, Ջավդեք, Ծավդեք) ավանը կամ քաղաքը Մեծ Հայքի Սյունիք նահանգի կարևոր կենտրոնն էր, որն իր անունը փոխանցել է համանուն մարզին (հիմնականում ներկայիս Վարդենիսի շրջանը և ճամբարակի շրջանի որոշ գյուղեր): Տեղադրված լինելով համանուն լեռնանցքի ամենակարևոր ռազմավարական կետում՝ Սոթքը միացրել է Հարավային և Արևելյան Կովկասները՝ լինելով Դվին-Պարտավ ճանապարհի ամենակարևոր կետերից մեկը: Սակայն միայն աշխարհագրական դիրքը չէ, որ Սոթքի շրջանը դարձրել էր գրավիչ: Սոթքը տեղադրված էր նաև Մերձավոր Արևելքում իր չափերով և ներուժով ամենախոշոր ու արդեն հնում հայտնի ոսկու հանքի մոտակայքում:

Տարածաշրջանի ուսումնասիրության պատմությունը. Սևանա լճի հարավարևելյան ափերի հնագիտական հետազոտությունը սկսվել է XIX դ.: Այստեղ շրջել են տարբեր գիտնականներ և ճանապարհորդներ՝ հուշարձանների վերաբերյալ թողնելով տարատեսակ գրառումներ: Առաջին մասնագետը, ով տարածաշրջանում զբաղվել է զուտ հնագիտությամբ, Ե.

հայտ են: Խոսքը բնակատեղիների, ամրոց-բնակատեղիների, դամբարանադաշտերի մասին է, որոնցից հավաքված մոտ 1000 բեկորների դիագնոստիկան ցույց է տալիս, որ գործ ունենք բրոնզ-երկաթե դարյան, անտիկ և միջնադարյան շրջանների հուշարձանների հետ: Պեղումներ են իրականացվել չորս հուշարձաններում՝ Սոթք 1 ամրոց-դիտակետում, Սոթք 2 ամրացված բնակավայրում, Սոթք 10 դամբարանադաշտում և Նորաբակ 1 ամրոց-բնակավայրում և դամբարանադաշտում:

Սոթք 1 բնակատեղին գտնվում է համանուն գյուղի արևելյան մասում: Տեղա-



կայված լինելով վաղ միջնադարյան Դվին-Պարտավ տարանցիկ առևտրային ճանապարհի Գեղարքունիք-Արցախ հատվածում և շրջակայքի նկատմամբ ունենալով վերահսկող դիրք, կարևոր դիտակետ է հանդիսացել Սոթքի լեռնանցքով Արցախ տանող ճանապարհին: Հնագիտական աշխատանքները ցույց են տվել, որ բնակավայրը գործել է վաղ (IV-VII դդ.) և զարգացած (XIII-XIV դդ.) միջնադարում, ինչը համապատասխանում է Դվին-Պարտավ ճանապարհի գոյության ամենաակտիվ ժամանակաշրջանին: Բնակատեղին ներկայումս է քարե հիմքով շինություններով, տարատեսակ խեցեղեն բեկորներով, քարե և ապակե առարկաներով: Հուշարձանի վերին հորիզոնները տեղ-տեղ ներկայացված են միջնադարյան քրիստոնեական թաղումներով, որոնք թվագրվում են IX դ.: Նորագույն շրջանում ևս հուշարձանի տարածքում իրականացվել են թաղումներ:

Սոթք 2 բնակատեղին ամրացված բնա-

բնակավայրը որոշ ժամանակ չի գործել: Ուշ բրոնզի դարաշրջանը հուշարձանում ներկայացված է միայն թաղումով (Ք.ա. XIV-X հազ. դդ.): Բնակավայրը վերստին կյանքի է կոչվել Ք.ա. XII-IX դարերում (վաղ երկաթի դարաշրջան): Սոթք 2-ը, համաձայն ռադիո-ածխածնային տվյալների, կարող էր գործել նաև Ք. ա. VIII-V դդ., ինչպես նաև զարգացած և ուշ միջնադարում:

Առկա տվյալները հնարավորություն են տալիս վերականգնելու երկրագործությամբ և անասնապահությամբ, ինչպես նաև մետաղագործությամբ ու վանակատի մշակմամբ զբաղվող մի հասարակություն, որը մեծապես կարող էր օգտվել տարածքի հարուստ մետաղահանքերից և ռազմավարական կարևոր դիրքից: Այս բնակչությունը կայացել է աշխույժ հարաբերությունների մեջ, ինչպես կովկասյան, այնպես էլ Կովկասից անդին ընկած շրջանների հետ (ինչպես օրինակ՝ Ուրմիայի ավազանի):

Սոթք 10 դամբարանադաշտը հայտնա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԿԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՎ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

րաւ Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչներին և քանդակագործներին աչքերով» ուսումնասիրութեամբ, որը հիմք դարձաւ համառուն եռակեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերազգրքի ստեղծման համար: Գաղտնիք չէ, որ հայ մշակութեան բացառիկ տեղ ունի Կոմիտասի կերպարը: Կոմիտասի կերպարին են անդրադարձել հայ նկարիչներին ու քանդակագործներին շատերը կերպարվեստի տարբեր տեսակներն ու ժանրերուն: Եվ Ա.Աղասյանը հայ արվեստաբանութեան մէջ առաջին անգամ մման ընդգրկումով համակողմանիորեն ուսումնասիրել ու լայնորեն ներկայացրել է Կոմիտասի կերպարը հայ նկարիչներին և քանդակագործներին ստեղծագործութեան մէջ:

Գրախոսվող ժողովածուի առանցքում երաժշտագիտական ուսումնասիրություններն են:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աճա Ասատրյանը «Արշակ Չալանյանը Կոմիտասի ստեղծագործական ճակատա՞րուն» ծավալուն հետազոտության մեջ, թերթիվով Կոմիտասի և Ա. Չալանյանի անձնական և ստեղծագործական շփումների էությունը

նուն» արժեքավոր գրքույկում: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավետիս Դյուխանյանը «Ֆրանսիացի նշանավոր հայա-գետ Ֆրեդերիկ Մակլերի Կոմիտասի մասին» ուսումնասիրության մեջ գիտական շրջանառության մեջ դրեց Մակլերի՝ Կոմիտասի անձին ու գործին տված գնահատականները, որոնք «կոմիտասագիտության համար մշտապես արդիական են»:

Կոմիտասի կերպարը խթանել է հայ գրականության առաջընթացը ևս: Նրան են նվիրվել բազմաթիվ չափածո և արձակ ստեղծագործություններ, որոնց մեջ բացառիկ տեղ են գրավում Պարույր Սևակի «Ամենելի զանգակատուն» և Եղիշե Չարենցի «Requiem Aeternam» պոեմները: Նշենք նաև Գուրգեն Մսիաիրու «Երգ Կոմիտասին», Նաիրի Չարյանի «Կոմիտասին», Վահրան Ավագանի «Գազել Կոմիտասին», Հովհաննես Շիրազի «Բեյթ» Կոմիտասին, Համո Սահյանի «Կոմիտասին», Ազատ Վշտունու «Կոմիտասին», Գեղամ Մարյանի «Դեպի կառավարաբան», Վահագն Մավթյանի «Կոմիտաս» և այլ չափածո երկեր: Կոմիտասի կերպարը

մուկի էջերում ևն:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքել Նավոյանը «Կոմիտասի երաժշտատեսական երկու հիմնադրույթ» (ընդհանուր բնութագրի)» հետազոտության մեջ նկատել է. «Կոմիտասի երաժշտագիտական գործունեության մեջ զուտ երաժշտատեսական հետազոտություններն ու դիտարկումները խիստ կարևոր նշանակություն ունեն նրա ողջ ժառանգությունն արժեքելիս: Այլ խոսքով՝ «Կոմիտաս տեսաբան» էր, որ մեծ չափով պայմանավորեց «Կոմիտաս կոմպոզիտորի» երաժշտական լեզվամտածողության բացառիկ ինքնատիպությունը և առհասարակ «Կոմիտաս երևույթի» պատմական եզակիությունը հայ մշակութային իրականության մեջ»:

Ինչպես հայտնի է, Կոմիտասի բազմաժյուղ գործունեության ինքնատիպ դրսևորումներից մեկը հայոց «Սասնա ծռեր» էպոսի երաժշտական բաղադրիչի կարևորումն ու գրառումն է: Արվեստագիտությունը թեկնածու Տաթևիկ Շախկուլյանը «Կոմիտասը և «Սասնա ծռեր» էպոսի երգերը» ուսումնասիրության մեջ հիմնավորում է, որ հայոց էպոսի երգերի գրառման ավանդույթի հիմքը դրել է Կոմիտասը: «Ընդ որում,- մկատում է եղիմակը,- նա դրանք էականորեն է կարևորել, ինչը հաստատվում է նաև այն համգամանքով, որ նա ծրագրել էր իրականացնել «Սասնա ծռեր» էպոսի վրա հիմնված օպերային ստեղծագործություն, ինչի վկայություն են արխիվային ձեռագրերը»:

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը «Կոմիտաս վարդապետը և հայ կոմպոզիտորական դպրոցը» հետազոտության մեջ արձանագրում է. «Կոմիտասն իմաստավորեց ժողովրդական երաժշտության օրինաչափությունները, կոմիտասյան ավանդույթների վրա խարսխվեցին հայ կոմպոզիտորական դպրոցն ու երաժշտատեսական միտքը: Ստեղծագործական այն սկզբունքները, ու նախանշեց Կոմիտաս վարդապետը, արդիական են այսօր և կլինեն նաև ապագայում»:

Պարույր Սևակի «Անլռելի զանգակա-
տուն» ու Եղիշե Չարենցի «Requiem
Aeternam» պեմների հիման վրա 50 տարի
առաջ՝ 1969թ., կոմպոզիտոր Էդգար Յովհան-
նիսյանը գրեց «Անտոնի» բալետը, որի լիբ-
րետոն կազմել էր բալետի արտիստ և բա-
լետմայստեր Մաքսիմ Մարտիրոսյանը։ Բա-
լետի պրեմիերան տեղի ունեցավ 1969թ. նո-
յեմբերի 20-ին Երևանի օպերային թատրո-
նում Մաքսիմ Մարտիրոսյանի բեմադրու-
թյամբ։ Արվեստագիտության դոկտոր Նազե-
նիկ Սարգսյանը «Անտոնի»... առաջին բալե-
տը Կոմիտաս վարդապետի և Մեծ եղեռնի
մասին» ուսումնասիրության մեջ բալետի
բալետմայստեր Մ.Մարտիրոսյանի բեմադ-
րության տեսագրության (1988) և Մ.Մարտի-
րոսյանի ծեռագիր սցենարի տեքստի ման-
րազնին հետազոտության հիման վրա հայ
բալետագիտության մեջ առաջին անգամ
բացահայտել է բալետի ժանրային, ռճակա-
ն, կառուցվածքային և մի շարք այլ առանձնա-
հատկություններ և հիմնավորել, որ «Անտո-
նի» բեմադրությունը հայ բալետի պատ-
մության մեջ չունի իր նմանակը ո՛չ
նախկինում, ո՛չ էլ հետագայում՝ մինչև այսօր։
Եվ ոչ միայն ուրիշ հայ բալետմայստերների,
այլև իր իսկ՝ Մաքսիմ Մարտիրոսյանի ստեղ-
ծած վառ ու տաղանդավոր բեմադրությու-
նների շարքում։

Արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը «Հարսանեկան օժիտի երգերը Կոմիտասի գրառումներում» հետազոտության մեջ, քննության առնելով կոմիտասյան հինգ մանուշերը, եզրակացնում է, որ օժիտի խաղիկներին ուսումնասիրված է հինգ նոտային օրինակներն այն հատուկեմտ պահպանված արժեքավոր մանուշերից են, որոնք մոտավոր պատկերացում են տալիս այդ հմանեհի սովորույթի մասին և ավանդական հայկական հարսանեկան ծեսի երեմնի ճոխության վկայությունն են:

Գրախոսվող արժեքավոր ժողովածուն, անշուշտ, ծանրակշիռ ներդրում է հայ երաժշտագիտության մեջ և արտացոլում է կոմիտասագիտության արդի փուլը:

Միևնույն ժամանակ այն կապում է 1981 թվականին խզված կոմիտասականների շղթան և շարունակում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական արժեքավոր ավանդույթներից ևս մեկը: Վստահ եմք, որ կոմիտասականի չորրորդ հատորը շատ չի ուշանա:

ԱՆՈՒՄ ԱՍԿՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
տնօրենի տեղակալ, արվեստագիտութ-
յան դոկտոր, պրոֆեսոր**

**ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ
ԿՈՄԻՏԱՍԱԿԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

Կոմիտասագիտության ասպարեզում ժանրակշիռ ներդրում ունեցող ՀՀ ԳԱԱ արվեստի հիմնադրուհու, Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության հետ մեկտեղ (1960-2006), իրականացրել է հայ մեծ երաժշտի ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրապարակումը «Կոմիտասական» խորագրով ժողովածուի երկու հատորներով (1969, 1981):

1969 թվականին՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ, ՉՍՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լայնական ՍՄՀ ԿԿ հրատարակչությունը լույս ընծայեց «Կոմիտասական» առաջին հատորը (գլխավոր խմբագիր՝ Ռոբերտ Աթայան), որն ընդգրկում էր Կոմիտասի երաժշտական ու գիտական աշխատանքների, ստեղծագործական ոճի և ստեղծագործությունների մեկնաբանության գերազանցապես տեսական ուսումնասիրություններ և հուշեր:

Նախատեսվում էր, որ մնան հատորներ՝ նյութերի և հեղինակների ավելի լայն ընդգրկումով, պարբերաբար պիտի հրատարակվեին մաս ապագայում:

1981-ին ՅՍՄՅ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ՍՄՅ ԳԱ հրատարակչությունը հրատարակեց «Կոմիտասականի» երկրորդ հատորը, որտեղ ընդգրկված էին Կոմիտասի կյանքին, գործունեությանը և ստեղծագործական հարցերին նվիրված հոդվածներ և ուսումնասիրություններ, ինչպես նաև Կոմիտասի ծեռագիր ժառանգության հրապարակումներ «Ամուշ» օպերայից և 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուի:

2019-ին, ի նշանավորումն Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի, ՀՀ զԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ զԱԱ հայազգիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական ինժեներամի աջակցությամբ ՀՀ զԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց «Կոմիտասականի»՝ վարդուց սպառված երրորդ հատորը (գլխավոր խմբագիր՝ Աննա Ասատրյան), որը, ի տարբերություն նախորդ հատորների, ունի միջգիտակարգային բնույթ և համախմբել է ինչպես երաժշտագիտության, այնպես էլ կերպարվեստագիտության, զրականագիտության և բալետագիտության ոլորտների առաջատար 14 մասնագետների:

Հատորում ընդգրկված հոդվածները և ուսումնասիրությունները, ինչպես և նախորդ հատորներում, նվիրված են Կոմիտասի կյանքին, ստեղծագործությանը, երաժշտագիտական և հետազոտություններին ու բանավեճակալն գործունեությանը: Սակայն ներկա հատորում հայ կոմիտասագիտության մեջ առաջին անգամ քննության առարկա է դարձել նաև Կոմիտասի կերպարի բացահայտումը հայ կերպարվեստում, երաժշտության և զրուխանության մեջ:

Կոմիտասականի գրախոսվող հատորը բացվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության ղոկտոր, պրոֆեսոր Արա-

բացահայտել է այն մեծ ու նշանակալի դե-
րը, որ ունեցել է հայ մեծամուն գործիչը համ-
ճարել Կոմիտասի ստեղծագործական ճա-
կատագրում, ինչպես նաև ձևակերպել Ա. Չո-
պանյանի ներդրումը կոմիտասագիտության
մեջ: Ա. Չոպանյանը բարձր է գնահատել Կո-
միտասի տաղանդն ու նրա կատարած գոր-
ծը, իր հոգվածմենքով արժևոտել է Կոմիտա-
սի գործունեությունը և նպաստել նրա ստեղ-
ծագործության պրոպագանդմանը: «Մնա-
հիտ» հանդեսի էջերում Ա. Չոպանյանը մի
կողմից՝ ներկայացրել է Փարիզում և Ժնևում
Կոմիտասի ծավալած համերգային գործու-
նեության լիարժեք համայնապատկերը,
տպագրել տարբեր երաժշտյաների կողմից
Կոմիտասին նվիրված հոգվածներն ու գնա-
հատականները, էջեր հատկացրել հուշազ-
րություններին, մյուս կողմից՝ հրատարակել
Կոմիտասի երաժշտագիտական ուսումնա-
սիրությունները և ինքնակենսագրությունը:

Արվեստագիտության դոկտոր, արոֆեսոր Աննա Արևշատյանը «Կոմիտաս վարդապետ և Գրիգոր Գապասաքալյան. խազագիտական առնչություններ» ուսումնասիրության մեջ արտահայտվում է այն միտքը, իր Կոմիտասի խազագիտական արժեքավոր հետազոտությունների սևագրերի մեջ առյուծի բաժինը կազմում են Կոստանդնուպոլսում գործած Նոր Ժամանակի ազգային երաժշտագիտական մտքի ակունքներում կանոնադրված երաժիշտ-տեսաբան Գրիգոր Գապասաքալյանի աշխատությունների հղումները, դրանցից արված մեջբերումները և համեմատությունները: «Հետևաբար, եզրակացվում է Ա.Արևշատյանը, - Գապասաքալյանի աշխատությունները եղել են Կոմիտասի սեղանի գրքերը, որոնք իբրև միջնադարյան երաժշտական գիտական և գործնական տեսության հանրագիտական, մշտապես ուղղորդել են նրան իր խազագիտական հետազոտությունների ընթացքում»:

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանը «Հնչյունի իմիտացիան Հոմիտաա» վարդապետի ստեղծագործություններում» հետազոտության մեջ բացահայտել է, որ «...կոմիտայան կետային մանանկունները թե՛ կեստայնությամբ, թե՛ հարմոնիկ՝ կվարտ-կվինտ-օկտավային կառուցվածքով, թե՛ մեղեդիական շարադրանքով, մաս հնչյունագրությամբ որոշակի աղբյուրներ ունեն XIX և հատկապես XX դարի կոմպոզիտորական արվեստի տարբեր ուղղությունների հետ (պուանտիկոն, դոդեկաֆոնիա, գծայնություն, սոնորիկա), ավելիմ դրամով իսկ հաճախ կամխում են XX դարի եվրոպական երաժշտության ինչ-ինչ երևույթներ»:

Գրախոսվող ժողովածուում տեղ են գտել հետազոտություններ, որոնք ևս մեկ անգամ փաստում են Կոմիտասի միջազգային ճանաչման մասին:

1909 թվականին ֆրանսիացի արևելագետ-հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այցելել է Եջմիածին, ամենամ ծանոթացել Կոմիտասի հետ և նրա մասին բացառիկ հուշեր թողել իր ճամփորդական ուղեգրություն անջ, ինչպես նաև «Երաժշտությունը Հայաստանում»

մերձչանքի աղբյուր է դարձել նաև օտարագզի բանաստեղծների համար՝ Արսենի Տարկովսկի, Պավլո Տիշինա, Կայսին Կուլիկ... Բանասիրական գիտությունների դպրոց, պրոֆեսոր Ազատ Քոխիազարյանը՝ «Կոմիտասի կերպարը եղիշե Չարենցի և Պարույր Սևակի պոեմներում» հետազոտության մեջ կոմիտասագիտության մեջ առաջին անգամ քննության է առել հայ նորագույն գրականության մեջ Կոմիտասի մասին գրված պոեմները, բացահայտել դրանց յուրահատկություններն ու տարբերությունները, որոնք պայմանավորված են ոչ միայն ժամանակով, այլև հեղինակների անհատականությամբ:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը «Քազմալեզվությունը և ինքնությունը հայ աշուղական ավանդույթում» Կոմիտասի դրույթների լույսի ներքո» ծավալուն ուսումնասիրության մեջ բնութագրել է առել հայ ազգային երաժշտական ինքնության կոմիտասյան հարացույցը, որը, հեղինակի դիտարկմամբ, համահունչ ժամանակի գաղափարախոսությանը, ամհամատեղելի էր արևելյան տարբեր լեզուներով ստեղծագործող աշուղների գործունեության հետ: «Կոմիտասի առաջնային գիտահետազոտական խնդիրները չեն սահմանափակել նրա ստեղծագործական հետաքրքրությունների լայն տեսադաշտը, նկատելի է երաժշտագետը, որտեղ, բացի գեղջուկ և իռգևոր երաժշտությունից, ընդգրկված են միջնադարյան գուսանական, աշուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության նմուշները: Կոմիտասի երաժշտաբեմական մտահղացումների» «Կարկանդակ», «Քաղաքավարության վլանսները», «Սամա ծեփ», «Սնուղ», ժամրային-թեմատիկ ուրվագծերում տեղ գտած անվանի աշուղներ Շիրինի, Ջիվանու հանրահայտ երգերն ու այլ բնութագրական օրինակներ յուրովի մակամոնել են հայ կոմպոզիտորական արվեստում դրանց բեղունավոր կիրառությունների բազմաառն ուղին»:

Բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը «Թոմաս Կարտմանը՝ Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման ակունքներում» հետազոտության մեջ լուսաբանել է ռուս կոմպոզիտոր և դիրիժոր Թ.Զարտմանի դերը 1919թ. մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնված «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման գործում, որի համար խթան դարձան ռուս երաժշտի «Կոմիտաս Կաթապետ» հորվածը և Կոմիտասի մասին նրա դասախոսությունը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Չոլիաննիսյանը «Կոմիտասը թունամյանական վավերագրերում» ուսումնասիրության մեջ ներկայացրել է Կոմիտասի ստեղծագործության, նրա կյանքի և մասնավորապես Թումանյանի հետ բարեկամության մասին ուշագրավ և նորահայտ փաստեր, որոնք պահպանվել են թունամյանական վավերագրերում՝ բանաստեղծի և նրա մասին հոգվածներում, գրած և ստացած նամակներում, հուշերում, լուսանկարի ընծայազրում, բանաստեղծի ընտանիքի անդամների արխիվներում, պարբերական մա-



Հայագի իտալացի կոմպոզիտոր և դիրիժոր Ջանի Էփրիկյանը համագործակցել է երաժշտական բոլոր ժանրերի բազմաթիվ ներկայացուցիչների հետ: Իր «Սրբազան երաժշտություն» ֆիլմայում իրականացրել է սեփական նվագախմբի կատարումների և գործիքավորումների ծայնագրությունները: 2015 և 2016 թվականներին Յուլիոլուում արժանացել է «Լուս Անջելեսի երաժշտական մրցանակաբաշխության» պարգևներին՝ որպես «Տարվա միջազգային արվեստագետ» և գործիքային երաժշտության «Միջազգային երաժշտական արտադրիչ»: 2017-ին շահել է «Լաս Վեգասի լավագույնը» մրցանակը՝ գործիքային երաժշտության համար, իսկ դարձյալ Յուլիոլուում արժանացել է «ակնառու միջազգային դիրիժոր» պարգևին: 2019 թվականին էլ պարգևատրվել է «կինոերաժշտության մրցույթ» մրցանակով՝ սլովակյան «Ջուր Աֆրիկայի համար» կարճամետրաժ ֆիլմի երաժշտության համար:

Ջանի Էփրիկյանը թոռն է բանասեր Սուքիաս-Հակոբ Էփրիկյանի (1873-1952): Վերջինս ծնունդով Ախալցխայից էր, եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ: Նրա «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» ծավալուն ուսումնասիրությունը շարունակում է մնալ հայագիտության կարևոր բառարաններից մեկը: Նա հեռացել է միաբանությունից՝ սիրահարվելով և ամուսնանալով իտալուհի Լաուրա Չասոնի հետ: Վերջինիս պապը՝ նկարիչ Ջուլիանո Չասոն (1833-1889), Մխիթարյանների պատվերով ստեղծել է որոշ նկարներ հայ դիցաբանության թեմաներով: Ընտանիք կազմելով՝ Սուքիաս-Հակոբը (Ջակոմոն) ապրել է մեկուսացած կյանքով Տրեփզո քաղաքում, որտեղ աշխատել է տպարանում: Եվ եթե նրա՝ միաբանությունը լքելու պատճառով տուժել է

նրանք ճիշտ:

- Սա մի խնդիր է, որն, ինչպես նշեցիք, գոյություն ունի երկար ժամանակ, բայց ինձ թվում է, որ ամբողջ աշխարհում առկա է լայն հասարակության աճող հետաքրքրություն «դասական երաժշտության» և «ժամանակակից դասական երաժշտության» հանդեպ:

- 21-րդ դարում շարունակում են օպերաներ գրել: Դուք ևս բացառություն չեք: Նկատի ունեն ձեր վերջին նախագծերից «Ութերորդ օրը» օպերան...

- Այն «ժամանակակից օպերա» է, որի վրա ես շարունակում եմ աշխատել: Կազմում ընդգրկված են ասումներով դերասան, սինֆոնիկ նվագախումբ, փոքր ռոք խումբ, երգչախումբ և բալետ: Թեման մարդու ուղին է՝ սկզբից ի վեր, և այն վնասը, որը նա

- ճիշտ այդպես, պապս էր, որն ինձ համար ընտրեց Վարդան, իսկ իմ քույր Լաուրայի համար՝ Գայանե անունները: Հորս հայկական անունն էլ Վահան էր: Իսկ մայրս վենետուհի էր՝ Բրունա անունով:

- Ես կարդացել եմ, որ Սուքիաս Էփրիկյանը ծերակալվել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, զաղափար ունե՞ք, թե՛ ինչու:

- Պատերազմի ժամանակ հայրս և մայրս լեռներում պարտիզան էին, իսկ հորս անունն այն մարդկանց ցուցակում էր, որոնք պիտի զնդակահարվեին ֆաշիստների կողմից: Երբ ոստիկանները եկել են տուն՝ հորս հետևից, չեն գտել նրան ու ծեր-բակալել են Հակոբ պապիս, որը, սակայն, մի քանի օր անց ազատվել է:

- Երբ 1949 թվականին Անջելո Էֆրիկ-

Ջանի ԷՓՐԻԿՅԱՆ. «Հպարտ ենք մեր հայկական ծագմամբ ու անուններով»

հայագիտությունը, ապա շահել է իտալական մշակույթը: Նրա միակ զավակն է իտալահայ ականավոր երաժշտագետ, կոմպոզիտոր և ջութակահար Անջելո-Վահան Էֆրիկյանը (1913-1982), որն էլ իր հերթին իտալական արվեստին է պարզել կոմպոզիտոր-դիրիժոր Ջանի Էփրիկյանին (որը նախընտրում է գործածել պապի ազգանվան գրեթե անգլիկանի, գրող Լաուրա Էֆրիկյանին (ժամանակին իտալական էստրադայի աստղ Ջանի Մորանդիի կինը)...

- Հարգելի՛ Ջանի, ինձ համար տպավորիչ էր համացանցում լսել ձեր երաժշտությունը՝ անկախ ձեր հայկական ազգանունից: Դժվար չէ՞ որպես կոմպոզիտոր կայանալ մի այնպիսի երաժշտական երկրում, ինչպիսին Իտալիան է:

- Այժմ բավական դժվար է ճանաչվել ինչպես Իտալիայում, այնպես էլ այլ երկրներում: Պատճառները տարբեր են, որոնցից ամենակարևորը երաժիշտների՝ մեծ տարածքներով ցրված և մասնատված լինելն է: Բացի այդ, մենք երաժշտություն ստեղծելու համար անհրաժեշտ է մեծ, հետևաբար՝ անկայուն ծախսերով նվագախումբ: Բարեբախտաբար, թվային գրադարանների տեխնոլոգիայի շնորհիվ, այսօր հնարավոր է երաժշտություն գրել ձայնային և դինամիկ գերազանց մակարդակով:

- Երկար ժամանակ բազմաթիվ երաժիշտներ և երաժշտագետներ ահագնազուն են դասական երաժշտության ճգնաժամի մասին: Ձեր կարծիքով որքանով են

հասցրել է երկրագնդին սոցիալապես և էկոլոգիապես՝ իր միակ նպատակն ունենալով շահույթն ու ուժը՝ այդպիսով մարդկությանը մոտեցնել: Սակայն ավարտին փրկություն է հասնում ողջ մարդկությանը: Ես երբեք տարի աշխատել եմ այս նախագծի վրա, հիմա գրեթե ավարտում եմ: Լինելով շատ թանկ արտադրություն՝ մնում է հիմա գտնել մի արտադրիչի, որը այն բեմ կբարձրացնի:

- Կարո՞ղ ենք ասել, որ ձեր երաժշտական ծիրերը ժառանգել են ձեր հորից՝ Անջելո Էֆրիկյանից, որն առավել հայտնի է Վիվալդիի երաժշտական ժառանգության վերահայտնաբերմամբ:

- Այո, պետք է ասեմ, որ հայրս՝ Անջելո Էֆրիկյանը, իմ ամենամեծ ուսուցիչն էր կյանքում և երաժշտության մեջ: Ցավոք, նա շատ վաղ մահացավ, երբ ինձ ամենից շատ էր անհրաժեշտ իր ներկայությունը: Երբ երեխա էի, նա աշխատում էր Վիվալդիի վերահայտնաբերման ծրագրի վրա, և ես մեծացա՝ ընկղմված բարոկկո ու դրամից հետո ստեղծված երաժշտության մեջ: Դաշնամուր և երաժշտության տեսություն սովորելուց հետո ես բավականին ուսումնասիրել եմ հարմոնիա ու կոմպոզիցիա (ոչ կոմպոզիտորիայում) և սկսել եմ նվագախմբի համար գրել յոթանասունականների սկզբից:

- Որքան գիտեմ, Ձեր լրիվ անունը Ջան Կլաուդիո Վարդան է: Ենթադրում եմ, որ Ձեր պապը՝ Սուքիաս-Հակոբ Էփրիկյանն է թոռներին կնքել հայկական անուններով...

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ...

➤3 փաստագրվել են Բեխտերևի հիվանդության հետքեր:

N 3 դամբանախուցը հատակագծում ձվաձև էր, որտեղ կատարվել էր հիմնահողային թաղում, մասնավորապես երեք կանանց խմբային թաղում՝ դիպոլման ծեսով: Ուղեկցող գույքը ներառում էր թվով 4 խեցանոթներ, բրոնզե ապարանջաններ, օղեր, մատանիներ, ճակատակալ, հերակալներ և տարատեսակ ուլունքներ:

N 4 դամբանախուցը հիմնահողային էր, արևմտյան պատը, սակայն, քարաշար: Արևմտյան պատի քարաշարի տակ առկա էր ոչ մեծ հարթակ: Խցում կատարված էր խմբային թաղում (14 անհատ): Ուղեկցող գույքը ներառում էր թվով 4 խեցանոթ, երկաթե միզակի ծայր, ապարանջան, բրոնզե մատանիներ, ապարանջաններ, օղեր, ճակատակալ, տարատեսակ ուլունքներ և եղջյուրից պատրաստված, լավ մշակված ինչ-որ իրի սևամեջ գլխիկ:

Ռադիոածխածնային անալիզների արդյունքների համաձայն՝ Նորաբակի N 1 դամբանաբլուրն ընդգրկում է զարգացած ուշ բրոնզից մինչև միջին երկաթ ընկած ժամանակահատվածը (Ք. ա. XIV-VI դդ.)՝ գլխավորապես վերաբերելով վաղ երկաթին: Ամենավաղը թվագրվում է դամբանախուց N 2-ը՝ Ք. ա. XIV-XIII դդ., ապա N 3-ը՝ Ք.ա. XI-X դդ., N 4-ը՝ Ք. ա. X-IX դդ. և N 1-ը՝

Ք. ա. VIII-VI դդ.: Այս ամպլանները հիմնականում տեսանելի են հնագիտական համեմատական նյութի համատեքստում:

Աշխատանքների շարունակությունը Արտամիշում. Սոթքում իրականացվող պեղումների վերջին շրջանում՝ 2015 թ., մեր արշավախումբը հետախուզական աշխատանքներ իրականացրեց պատմական Սոթքի՝ դեպի Արտամիշ տանող հատվածում: Այստեղ հետազոտվեցին արդեն հայտնի և հայտնաբերվեցին մի շարք նոր հուշարձաններ: Հետախուզական աշխատանքները շարունակվեցին նաև 2016 թ.: Իսկ 2019 թ. Արտամիշի թերակղզում իրականացվեցին առաջին պեղումները՝ վերստին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ համատեղ: Աշխատանքների վերսկսման համար հիմք հանդիսացավ հայ երկրաբանների կողմից մշակված երկրաբանական որոնողական աշխատանքների նոր մեթոդը, որը որոշվեց կիրառել Արտամիշում՝ պայմանականորեն Արտամիշ 23 և Արտամիշ 29 անվանված դամբարանադաշտերում: Պեղումներն իրականացվեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոթքի արշավախմբի, իսկ որոնողական երկրաբանական ուսումնասիրությունները ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների (ղեկա-

վար՝ Ա. Հովհաննիսյան) կողմից: Երկրաբանների ցուցումով ընտրվեցին երկու դամբարան, որոնց պեղումները փաստեցին նոր մեթոդի արդյունավետությունը:

Այսպես, Արտամիշ 23-ի դամբարանադաշտի դամբարան N 1-ի պեղումները ցույց տվեցին, որ այստեղ սալարկղային դամբանախցում արվել է դիպոլման ծեսով անհատական թաղում: Նմացյալը 30-35 տարեկան տղամարդ էր, որ թաղված էր աջ կողքի վրա, կծկված վիճակում: Դամբարանը հարուստ էր ուղեկցող գույքով (խեցանոթներ, բրոնզե և ոսկրե նետասլաքներ, ուլունքահատիկներ): Ըստ ռադիոածխածնային անալիզի արդյունքների՝ դամբարանը թվագրվում է Ք. ա. XI-X դդ. (վաղ երկաթի դարաշրջան):

Արտամիշ 29 դամբարանադաշտի N 1 դամբարանաբլուրը շրջանաձև կրոնիկ էր, որի կենտրոնում տեղակայված էր քարակղային դամբանախուցը: Այստեղ կատարվել էր խմբային թաղում՝ դիպոլման ծեսով, և տեսանելի էր, որ թաղել են ոչ թե մարդկանց դիերը, այլ նրանց՝ մկաններից և ջլերից ազատված ոսկորները: Լաբորատոր պայմաններում կատարված աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ պարզել, որ կատարվել է 27 անհատի թաղում՝ 17 տղամարդ, 4 կին և 6 երեխա: Ուղեկցող գույքը ևս ամբողջությամբ

բեկորային տեսքով է փաստագրվել: Չնայած բեկորայնությանը՝ գույքը բավականին հարուստ է բարձրորակ խեցանոթներ, երկաթե և բրոնզե դանակի շեղքեր, ճարմանդի բեկորներ, մատանիներ, ոսկրե կախիկներ, տարատեսակ ուլունքահատիկներ, այդ թվում՝ խեցուց, որոնք բերված են Կարմիր ծովից: Ռադիոածխածնային անալիզի տվյալների համաձայն՝ դամբարանը թվագրվում է Ք. ա. VIII-VI դդ.:

Նյութերի թանգարանացումը. Սոթքի և Արտամիշի պեղումներից հայտնաբերված բոլոր արտեֆակտները 2019 թ. համընկվեցին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան: Համապատասխան գտածոների առավել ուշագրավ օրինակները ցուցադրվում են 2019 թ. դեկտեմբերի 25-ին բացված «Ունեդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը» ժամանակավոր ցուցահանդեսի շրջանակներում: Ցուցահանդեսի բացումը հիմք հանդիսացավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և «Էրեբունի» թանգարանի կողմից կազմակերպված համանուն գիտաժողովի համար, որը նվիրվեց հայ մեծանուն հնագետ Աշխարհաբեկ Քալանթարի հիշատակին:

Սարիամ ԱՄԻՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից

ՌՈՔԵՐՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ



83 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց հայագիտության երախտավոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը: Մեծ է նրա ավանդը հատկապես արդի հայերենի փորձառական հնչյունաբանության ասպարեզում:

Վանեցի ծնողների անվանի զավակը 1966 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը և նույն տարին էլ ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: Ասպիրանտուրան հաջողությամբ ավարտելուց հետո Ռոբերտ Թոխմախյանը աշխատանքի է անցել նույն ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության խմբում, որը ղեկավարում էր պրոֆեսոր Ամալյա Խաչատրյանը:

Երիտասարդ գիտնական Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը հայագիտության մեջ մեծ հաջողությամբ կիրառել է լեզվաբանության մեջ մշակվող նորագույն փորձառական մեթոդները: Ճշգրիտ մեթոդների արդյունքների հաշվառմամբ Ռ. Թոխմախյանը փայլուն հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական՝ հետազայում՝ դոկտորական ատենախոսությունը:

Սկսած 1966 թվականից՝ Ռ. Թոխմախյանը իր գիտական գործունեությամբ սերտորեն կապված է եղել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Անվանի հայերենագետը ավելի քան կես դար դասավանդել է Հայաստանի Հանրապետության բուհերում (Երևանի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանության ինստիտուտում և այլ բուհերում):

Անցյալ դարի 90-ական թվականների կեսերից շուրջ չորս տարի Ռոբերտ Թոխմախյանը աշխատել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և Ճեմարանում: Ամենուրեք նա անկեղծորեն բարձր է գնահատվել և սիրվել ուսանողության և տնօրենության կողմից: Դա վկայում է այն մասին, որ անվանի հայերենագետը ոչ միայն գիտական խորությամբ և միաժամանակ մատչելիությամբ կարողացել է մատուցել լեզվաբանության հիմունքներն ու նորագույն նվաճումները, այլև հանդես բերել հոգատար և ազնվագույն մանկավարժի հատկանիշներ:

Հայագիտության մեջ Ռոբերտ Թոխմախյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, մենագրությունների:

Դրանցում դիտարկվում են հայերենագիտության նորագույն նվաճումները: Անվանի հնչյունաբանը մեծ հաջողությամբ մասնակցել է բազմաթիվ միջազգային լեզվաբանական գիտաժողովների և միշտ բարձր է պահել Հր. Աճառյանի անունը կրող լեզվի ինստիտուտի պատիվը: Հայերենագետը օրինակ կարող է ծառայել երիտասարդ գիտնականներին, տիրապետելով ընդհանուր լեզվաբանության նորագույն նվաճումներին՝ նորովի դիտարկելիս արդի հայերենի հնչյունական կառուցվածքը:

Վերջին տասնամյակում պրոֆեսոր Ռոբերտ Թոխմախյանը լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի առաջատար գիտաշխատակիցներից էր: Վերստին ուզում ենք հիշեցնել, որ նա օրինակ կարող է ծառայել երիտասարդ հայերենագետներին՝ վիճակագրական մեթոդների արդյունավետ օգտագործմամբ որակական նոր մակարդակի բարձրացնելու հայերենագիտությունը: Այդ է վկայում Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի «Հայերենի հնչաշղթան» մենագրությունը:

«Էդիթ պրինտ» հրատարակությամբ 2011 թ. Ֆ. Խլոթայանի հեղինակակցությամբ լույս է տեսել «Շարահյուսություն (կապակցաբանություն): Վարժություններ և գիտական գործնական աշխատանքներ» գիրքը:

Տողերիս հեղինակի և Ռ. Թոխմախյանի հեղինակակցությամբ ժամանակին լույս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» աշխատանքը, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

Ռոբերտ Թոխմախյանը, կանոնական մակարդակին զուգահեռ, քննության է ենթարկել արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական լեզուների խոսակցական ոլորտում դրսևորվող ոլորտային առանձնահատկությունները:

Անկեղծ ցավ ապրելով մեր գործընկերոջ մահվան առիթով՝ ուզում ենք նշել, որ ավելի քան կես դար մենք միասին աշխատել ենք նույն բաժնում, մշակել գիտական նորագույն բնագավառներ, հանդես եկել հեռուստատեսությամբ և այլն:

Հայտնի ասույթ է. «Մարդը գնում է, գործը՝ մնում»: Ռոբերտ Թոխմախյանը մնալուն լեզվաբանական աշխատանքների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երիտասարդ սերունդը շատ բան ունի սովորելու Ռ. Թոխմախյանի օրինակից:

Պետք է անկեղծորեն հուսալ, որ հայոց լեզվի և մեր կենդանի խոսքի ասպարեզում եռանդուն ջատագովի համբավ ձեռք բերած Ռ. Թոխմախյանի գործը կշարունակվի և ավելի կընդարձակվի նոր սերնդի լեզվաբանների կողմից:

Սրտի խորունկ ցավով նշելով կորուստը մեր անկրկնելի ընկերոջ՝ Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի՝ ասում ենք.

- Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

Արտեն ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հուլիսի 5-ին կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը:

Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ) Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է Լճաշենի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ. ավարտել է Կիրովական (այժմ՝ Վանաձոր) մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1982 թ. պաշտպանել է թեկնածուական, 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն, իսկ 2005 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամական և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, ապա 1978 թ. դեկտեմբերից՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. կեսերին տեղափոխվել է Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին:

Հ. Հարությունյանը հանրապետության ճանաչված պատմաբան-մանկավարժներից էր, սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ մեկ տասնյակ երիտասարդներ, եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: Անվանի պատմաբանը 1994 թ. Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչն էր: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից նորագույն պատմության բաժնի վարիչն էր: Նա Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ էր:

Զափազանց լայն էր պրոֆ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին ու միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի՝ XIX և XX դարերի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն: Հեղինակ է 8 մենագրության և շուրջ 100 գիտական հոդվածների, դպրոցական դասագրքերի: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության IV հատորի երկու գրքերում (որոնցից վերջինի պատասխանատու խմբագիրն էր) տեղ են գտել նաև անվանի պատմաբանի հեղինակած տեքստերը:

Վերջին տարիներին պրոֆ. Հարությունյանն աշխատում էր «Երևանի նահանգը 1849–1917 թվականներին» մենագրության վրա, որում անդրադարձ էր լինելու նահանգի ստեղծմանը, վարչատարածքային կառուցվածքին, ժողովրդագրական պատկերին, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերին:

Պրոֆ. Հ. Հարությունյանն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ պարզությամբ, բարությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով մեծ հեղինակություն էր վայելում ընկերական ու գիտական-մտավորական միջավայրում:

Գիտության անխնդ մշակ Համլետ Մալխասի Հարությունյանի հիշատակը հավերժ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում, իսկ գիտական ուսումնասիրությունները երկար տասնամյակներ սեղանի գրքեր կլինեն Հայաստանի XIX–XX դարերի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Դառնացած ժողովուրդ



Մտածումներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք են ծանր հիվանդությունների մման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները կամ ժանտախտի թույլը: Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային համճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվեք, առողջանաք, իհարկե, եթե էնքան արիություն ու հասկացողություն ունիք:

Են մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում:

Եսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հռչակում հիվանդ: Ամեն միմը ինքը չար չի, թայֆայական չի, էդ ա-մենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ա-կանջ դնել: Ճշմարիտը են է, որ մեր ամբողջությունը տա-ռապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությու-

նով:

Նայեցե՛ք:

Գյուղացի ռանչպար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազ-մանում, մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում «արնով է ընկնում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսե-լիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտա-ծում, որքան նրա հաջողության վրա է դարդ անում ու տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնա-սելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք - միշտ դժգոհ է, բողբոլում է, գանգատվում է անար-դարությունից, և գիտեք էդ անարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ էլ նա էլ է կարողա-նում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի՝ երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողա-նում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փչանում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպ-քերով փորձված է, էլ հայիոյանք, էլ գրպարտություն, էլ ափաշկարա սուտ, էլ չարախոսություն, կեղծավորու-թյուն: Նեղ թայֆայականությունը հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրապարակի, միշտ պետք է գար-կել, ծաղրել կամ լռեցնել, մի խոսքով, ամեն կերպ աշ-խատել սպանել, միայն նրա համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի:

Էդպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ: Մեկը մյուսի հռչակն ու հաջողությունը տանել չի կարողանում:

Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար երևույթին պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կա-րող են տալ: Ուրիշ ընդհանուր համագամքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությու-նը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողո-վուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնաճում ու փչանում: Եսպես է բնության օրենքը: Են հասարակ վարունգի թուփն ինչ է, հայտնի է, որ

եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտ-վում, էնքան է դառնաճում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնա-նում ու դաժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալիս, հայտն-վում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործե-րում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյան-քը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո, շատ բան, և՛ «հառաջադիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «բարեգործություն», բայց էդ բոլորը ներսից ճիճի կերած պտուղի մման են, և տա-ռապում են հիմնական պակասություններով, մի ընդիա-նուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տե-սակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրա-պուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի:

Արդ, եթե մենք ունենք ազգային իմաստություն, հո-գու արիություն և առողջ բնագղներ, անկարելի է աչք-ներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանա-լու առաջին պայմանը են է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակ-ցությանը կիստե՛ն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

Ուրիշ ճանապարհ կ'ա, ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած:

Դրանցից ոչ միմը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին, և նա դարձյալ կխոսի ու պա-տասխան կուզի, թե ո՞րն է էս ժողովրդի պատմական ճա-նապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ւր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասու-նի, Ջեյթունի, Մոկաց, Ղարաբաղի ու Լոռու սարերո՞ւմ, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք ի՞նչ վանքերի միստիք կամարների տա՞լ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս և անսկիզբ», թե՞ դալար մար-գերում ու խաչահանգիստ հովիտներում, ուր «լուսնյակն անուշ, հովվ անուշ, շինականի քունն անուշ» են: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնա-չու պաղատանքների՞ մեջ, թե՞ «Վերք Դայաստանի» հայ-րենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ:

Իհարկե, էս ամեն տեղերում, էս ամենի մեջ: Եվ ինչ-քա՞ն մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կա-րտը էս ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածության ու ավերածության...

Ո՞րն է հայ ժողովրդի ոգին, և ի՞նչ է ուզում նա:

ԱՆԿԵՂԾ ՉԵՆՔ

Երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, և երբեք այսքան ահեղի չա-փերով չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը: Մեծ ալեկոծություններն ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուն-ներից, և ահա-ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են:

Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է:

Անշուշտ նա պիտի շարժվեր այնպես, ինչպես ինքն է կամենում, և խոսեր այն, ինչ որ ինքն է մտածում:

Այդպես պիտի լիներ մարդը, առավել ևս այս տեսակի մի ժամանակի առաջ, երբ շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ աներևակայելի է:

Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան:

Եվ հանկարծ դուք տեսնում եք Նա խաղ է անում, դերասանություն է անում:

Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են:

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները ցածրն ու կեղ-ծավորները:

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ և, ահա, մեր կյանքը ավելի մման է թատերական բեմի, ու այդ բեմը թեև փոքր, բայց, տեսեք, որքա՛ն դերասաններ ունի...

Սրանք ոչինչ չեն սիրում, այլ ցույց են տալիս, թե սիրում են:

Եվ ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կաշելով, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու և տանելու, իրենք են բարձրանում, հեծում նրա վրա ու շինում իրենց էջը:

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էջը, ու միշտ էլ իր էջն է քշում, թեկուզ աշխարքը քանդվի:


Հաճախ սրանց շահատակությունը տևում է շատ երկար, նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել և ով են թամաշավորները կամ երբ են գլխի ընկնելու: Ու որպեսզի այդ թամաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը:

Խոսքն ինչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: «ժողովուրդն այդպես է կամենում...», «ժողովուրդը մեզ հետ է...», «ժողովուրդը ձեզ կդատի...», «Ո՞ւր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»: Այդ հերիք չէ, դեռ ժողովրդին էլ են կործանում...

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգրագետների իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

- Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է:

Դե եկեք ու ջոկեցեք իսկականը կեղծիքից:



Կիբեռնետիկայի հայրը և նրա հայ հերոսը

1962 թվականին Մոսկվայի պոլիտեխնիկական թանգարանի հսկա դահլիճում տեղի էր ունենում կիբեռնետիկայի համագումարը: Երբ նախագահողը հայտարարեց հերթական ելույթ ունեցողին, բոլորն ծափերի մեջ շատերը մի պահ չկարողացան լսել հռետորի ուժ լինելը: Կնոջ ուղեկցությամբ դանդաղաբայլ ամբիոնին մոտեցավ 67-ամյա, գրեթե կույր մի ծերունի:

Աշխարհահռչակ գիտնական, ժամանակակից կիբեռնետիկայի հայր Նորբերտ Վիներն էր: Նրա կատարած գյուտի համաշխարհային նշանակությունն այնքան մեծ է, որ ներկայումս դժվար է թվել գիտության ու տեխնիկայի մի բնագավառ, որտեղ չկիրառվեին էլեկտրոնային սկզբունքով կառուցված կիբեռնետիկական, հաշվիչ-վերլուծող և մարդու աշխատանքը թեթևացնող այլ սարքավորումներ:

Հետաքրքիր է իմանալ նաև, որ Նորբերտ Վիները միաժամանակ գրող էր: Էնցիկլոպեդիստի իր խառնվածքով, միևնույն չափանիշով մոտենալով թե՛ ատոմի մասնիկներին և թե՛ մարդկային հասարակությանը, հիմնալի գիտնականն ու մարդասերը իր հերոսներին օժտել է մարդկային ամենալավ առաքինություններով:

Աշխարհահռչակ ֆիզիկոսը՝ գրող: Սա այնքան էլ հաճախ հանդիպող դեպքերից չէ: Գուցե դա տաղանդի տարօրինակություն է:

Բացի լրագրողական հոդվածներից, Վիները գրել է երկու վեպ՝ «Գայթակղիչը» և «Այն, ինչ քարի տակ է»:

Վկայում են, որ նա հրապուրված խոսում էր իր գրական գործունեության մասին: «Դա լույս ժամանց չէ: Զանազան կենսական համգամանքների, մարդկանց ճակատագրի բերումով, բնավորությունների կազմավորումը, մարդկանց բախտի պրոբլեմը շատ է հետաքրքրում ինձ»,- ասում էր նա:

Իսկ մեզ համար հետաքրքիր է այն, որ Վիների առա-



ջին վեպի հերոսը՝ Ջեմս Գրեգորին, ազգությամբ հայ է: Օդեսայից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը վտարանդվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Գրքի տիտղոսաթերթի վրա գրված է. «Այն գիտնականներին, որոնք ճշմարտություն որոնելը գերադասում են երկրային բարիքներից: Եվ ահա, կյանքում այս սկզբունքով էլ գործում է Վիների հայ հերոսը:

Վեպի վերլուծությունը և հայ ընթերցողներին նրա բովանդակությանը ծանոթացնելը թողնելով գրականագետներին մեր փոքրիկ այս հաղորդումը վերջացնենք Նորբերտ Վիների կենսագրությանը վերաբերող հակիրճ խոսքով:

Ռուսաստանի Օդեսա քաղաքից ԱՄՆ տեղափոխված Հարվարդի համալսարանի ռուսաց լեզվի դասախոսի ընտանիքում 1894 թվականին ծնվեց մի մանուկ, որը 11 տարեկան հասակում սկսեց քոլեջ հաճախել, իսկ 18 տարեկանում դարձավ նույն համալսարանի փիլիսոփայության դոկտոր՝ դասավանդելով մաթեմատիկական տրամաբանություն:

Նորբերտ Վիները ազատ զեկուցումներ էր կարդում ամբիոններ, գերմաներեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով: Այդ «գերմարդը» խոսում էր չինարեն, պորտուգալերեն և, իհարկե, լատիներեն:

Լինելով մեծ մարդասեր՝ անվանի գիտնականը կյանքի վերջին տարիներին կոնֆլիկտի մեջ մտավ տիրող կարգերի հետ և թողեց ԱՄՆ-ը:

Նա մահացավ 1964 թվականին 70 տարեկան հասակում:

Նրա անունը դրված է 20-րդ դարի ճշգրիտ գիտությունների ակնառու ներկայացուցիչների՝ Էյնշտեյնի, Ռեզերֆորդի, Բորի Ֆերմիի, Ցիալկովսկու և ուրիշների անունների կողքին:

Ա. Յ.

Հասմիկ Գրիգորյանի լուսանկարը «Օպերա նյուզի» շապիկին

Լիտվայի օպերային թատրոնի հայազգի սոպրանո Հասմիկ Գրիգորյանի լուսանկարը զարդարում է «Օպերա նյուզ» («Օպերայի նորություններ») հանդեսի՝ 2020 թվականի հուլիսի համարի շապիկը:

Երջանկահիշատակ երգիչ Գեղամ Գրիգորյանի և լիտվացի երգչուհի Իրենա Միլկևիչիուտեի դուստր Հասմիկ Գրիգորյանը Վիլնյուսի քաղաքային օպերայի երկարամյա մենակատար է: Երկու անգամ արժանացել է Լիտվայի «Ոսկե բեմական խաչ» մրցանակին, 2005-ին՝ Վիլնյուսի դերերգի համար («Տրավիատա»), ապա 2010-ին՝ «Սուլինի Թոթ» մյուզիքլում տիկին Լուվիթի դերակատարման համար:

2016-ի մայիսին Հասմիկ Գրիգորյանը Լոնդոնի Միջազգային Օպերայի մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Լավագույն նորեկ» («Երիտասարդ երգչուհի») մրցանակին: Պարզևստարվել է նաև Լիտվայի Արժանյաց շքանշանով, Ասպետի խաչով (2018) և 2019-ին ճանաչվել է լավագույն երգչուհի Միջազգային Օպերայի մրցանակաբաշխությունում: 2017-ին Հասմիկ Գրիգորյանը ելույթ է ունեցել Երևանում:

Ա. Բ.

Հիանալի ելույթով հանդես եկած Երիտասարդները Ֆինլանդիայի միջազգային մրցույթում արժանացել են Գրան պրիի

«Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի երիտասարդ երաժիշտներ Արմեն Պուլչինյանի և Արթուր Գրիգորյանի դաշնամուրային դուետը Ֆինլանդիայում կայացած 2-րդ WPTA միջազգային մրցույթում



արժանացել է Աբսոլյուտ մրցանակին (Գրան պրի):

Չայկովսկու անվան դպրոցի սան Արմեն Պուլչինյանը մշեց, որ մրցույթին մասնակցել են շուրջ 40 երկրի երաժիշտներ Կանադայից, Ռուսաստանի Դաշնությունից, Չինաստանից, Հունաստանից, Ճապոնիայից, Ուկրաինայից, Շվեյցարիայից, Շվեդիայից, Իտալիայից, Թուրքիայից, Բրազիլիայից և մի շարք այլ երկրներից:

«Մրցույթն առցանց է իրականացվել՝ ելնելով մոր տիպի կորոնավիրուսի պատճառով աշխարհում տիրող իրավիճակից: Անց է կացվել 1 փուլով, մենք Հայաստանից տեսաձայնագրություն էինք ուղարկել Ֆինլանդիա, ինչից հետո այնտեղ ժյուրիի անդամները ընտրել են հաղթողներին: Շատ պատահական իմացա, որ մենք հաղթել ենք. առավոտյան ուղղակի «Ֆեյսբուք»-ի իմ էջն էի թերթում և հանկարծ տեսա, որ WPTA միջազգային մրցույթի էջում դրված են մրցանակակիրների անունները: Սկզբում բացեցի այնտեղ տեղադրված նկարները, կար 3 անուն, բայց չկային իմ և Արթուրի անունները, նեղվեցի»,- մշեց Արմենը:

Այդպես տիտուր Արմեն Պուլչինյանը, այնուամենայնիվ, սկսել է թերթել մրցույթի էջը և հայտնաբերել է, որ այդ 3 անունները եղել է 2 արժաթե և 1 բրոնզե մեդալակիրների անուններն էին, իսկ իրենք արժանացել են ամենաբարձր մրցանակին՝ Գրան պրիին:

Պուլչինյանն այդ պահին արագ վազել է ծնողների մոտ, կիսել իր ուրախությունը, ապա զանգել Արթուրին, ինչպես նաև իրենց ուսուցիչ Արմեն Բաբախանյանին և հայտնել լավ լուրը:

Միշիկ Ղազարյան

Վերջերս Մոսկվայում կյանքի 72-րդ տարում՝ երկարատև հիվանդությունից հետո վախճանվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Միշիկ Ղազարյանը:



Միշիկ Ղազարյանը ծնվել է 1948 թվականին Հայաստանի Հանրապետության Ներքին Ախտա, այժմ՝ Հրազդան, քաղաքում: Ավարտել է Երևանի Տարաս Շևչենկոյի անվան միջնակարգ դպրոցը և 1964 թ. ընդունվել Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: Հիշյալ բուհը 1970 թ. ավարտելուց հետո նա իր կյանքը կապել էր այդ ինստիտուտի հետ:

Ակադեմիական Նոր հրապարակություններ

1. Ավ. Իսահակյան- «Երկերի լիակատար ժողովածու», հ. XI
2. Հեղ. խումբ - «Կոմիտասական», հ. 3
3. Ա. Դուլխանյան - ժան Պիեռ Մահեն հայագետ
4. Հեղ. խումբ - «Նոր բառեր», պրակ Ե
5. Լ. Խաչատրյան, Մ. Սիրունյան - Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան
6. «Բանբեր հայագիտության», 2020 թ. N 1
7. «Գրականագիտական հանդես», 2020 թ. N 1
8. Ա. Յակոբեան - Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից Կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն)
9. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, հ. 23, N 1

Ն

■1912 թ. ապրիլի 15-ին «Տիտանիկ» նավը կործանվեց՝ բախվելով սառցաբեկորին: Ավելի քան 1500 հոգի զոհվեցին նավի խորտակման հետևանքով: Դրանից 14 տարի առաջ Մորգան Ռոբերթսոնը հրապարակել էր մի պատմվածք, որը կարծես «Տիտանիկ» խորտակման կանխատեսումն էր: Պատմվածքի սցենարով նույն «Տիտանիկ»-ի չափերն ունեցող նավը բախվում է սառցաբեկորին և խորտակվում... ապրիլյան մի խորհրդավոր գիշեր: Հորինված նավի անունը «Տիտան» էր:

■Պատմության մեջ առաջինը ավտոմեքենային համարանիշ է ամրացրել Ռուդոլֆ Զերցոգը: Դա 1901 թվականին էր: Համարանիշն ընդամենը երեք սիմվոլից էր կազմված՝ 1A1 (1A-ն իր երիտասարդ կնոջ անվան ու ազգանվան առաջին տառերն էին՝ Իոհաննա Անկեր, իսկ մեկը նշանակում է, որ համարանիշը միակն է):

■Անգլիայում տպագրված առաջին գիրքը շախմատի մասին էր:

■Իոսիֆ Ստալինի ծննդյան 70-ամյակի առթիվ ստացված նվերների ցուցակը խորհրդային թերթերում հրապարակվել է 1949-ի դեկտեմբերից 1953-ի մարտն ընկած ժամանակահատվածում:

■Նիկոլայ Ի-ը զինվորներին պատժելիս հնարավորություն էր տալիս ընտրելու գաութավախ կամ Գլինկայի օպերաների ունկնդրում:

■1568 թ. փետրվարի 16-ին Իսպանիայում մահվան դատավճիռ է կայացվել Նիդեռլանդների բոլոր բնակիչների նկատմամբ:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 20.07.2020 թ.:

"ГИТУИОН" ("Hayka") gazeta HAH PA